

նոր տուեր է «Ողջոյն քեզ Մարիամ» ազօթքն ալ:

Ընդ հակառակն հին հայ սովորութիւնը կը մերժէ լուսթիւնը: Եղիշէի միանձունք «խնդալից ուրախութեամբ» կ'ակմբին իրենց սեղանին շուրջ (215). եւ հոգ լուսթիւն չկայ: Ղեւոնդեանք ճաշեցին նոյնպէս «ուրախութեամբ» (Փրպ. 267) կամ «զուարթութեամբ» եւ հոգեւոր մխիթարական խօսակցութեամբ (Եղիշ. 133-4): Եւ անոնց դարուն կանոնական ազօթքը՝ զոր տեսանք (աստ, 281) կը գոհանայ Աստուծոյ՝ որ տուած էր «կերակուր ուրախութեան», եւ ոչ թէ սգոյ. զի լուսթիւնն հին ժամանակ սգոյ նշան էր: Տաթեւացւոյն յիշած (աստ, 280) մաղձոտ կերակուրն յատուկ էր «ոմանց», այս ինքն առանձնակեցաց, եւ ոչ թէ խմբովին ճաշակողաց: Եւ քիչ վերջ մեր վանականները պիտի տեսնենք այնպիսի վիճակի մէջ, որոյ հետ անհաշտ էր լուսթիւնը: Արդէն ուրիշ արեւելեան միանձանց քով ալ չկայ ասոր յիշատակը, մինչդեռ խօսակցութեան օրինակներ չեն պակսիր Հարանց Վարուց մէջ (Ա, 593. Բ, 510):

Սակայն արեւմտեայց սովորոյթն ալ մասամբ ունէր իւր հնութիւնը: Ոսկերեւրան անտիրացի մեծատանց խրատ կու